ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՄԱԾՁԲ-20-4-2

ք. Երևան

09.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն.Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «Կապիտալ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Նուրինջանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1 275 200 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կապիտալ Մոթորս» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 30/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշին Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2470103711480000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02654035
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Գ. ՆՈՒՐԻՆՋԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՄԱԾՁԲ-20-4-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ	Վազք կմ (պարբերականություն)	ԱՎՏՈՄԵԽԱՆԻԿԱ		
			ԿԻԱ -ՌԻՈ	ԿԻԱ -ՕՊՏԻՄԱ	ԿԻԱ-ՍՊՈՐՏԵՋ
	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Շարժիչի յուղի և զտիչի փոխարինում	7,500	Անվճար	Անվճար	Անվճար
2	Օդի զտիչի փոխարինում	15,000	Անվճար	Անվճար	Անվճար
3	Օդորակիչի զտիչի փոխարինում	15,000	Անվճար	Անվճար	Անվճար
4	Ավտոմեքենայի յուղման աշխատանքներ	15,000	Անվճար	Անվճար	2,000
5	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	40,000	6,000	8,000	8,000
6	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	0	0	0	0
7	Վառոցքի մոմի փոխարինում 1կ/տ	35,000-70,000	3,000	3,000	3,000
8	Փոխ.տուփի յուղի փոխարինում,քարտերի/մաքրում	100,000	80,000	90,000	90,000
9	Փոխ.տուփի յուղի ավելացում	-	Անվճար	Անվճար	Անվճար
10	Փոխ.տուփի զտիչի փոխարինում	70,000-100000	80,000	90,000	90,000
11	Բաժանարար տուփի յուղի փոխարինում	100,000	0	0	4,000
12	Բաժանարար տուփի յուղի ավելացում	-	0	0	0
13	Առջևի կամ հետևի կամրջակի յուղի փոխարինում	100,000	0	0	5,000
14	Արգելակման կոճղակի փոխարինում դիմացի	-	6,000	4,000	4,000
15	Արգելակման կոճղակի փոխարինում հետևի	-	4,000	4,000	4,000
16	Ձեռքի արգելակման կոճղակների փոխարինում	100,000	6,000	8,000	8,000
17	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում	150,000	2,000	3,000	3,000
18	Շարժիչի հովացման հեղուկի ավելացում	-	Անվճար	Անվճար	Անվճար
19	Ապակելվացիչ չսառչող հեղուկի լիցքավորում	-	Անվճար	Անվճար	Անվճար
20	Արգելակման հեղուկի փոխարինում	100,000	2,000	2,000	2,000
21	Արգելակման հեղուկի ավելացում	-	Անվճար	Անվճար	Անվճար
22	Արգելակման համակարգի կարգավորում, օդահանում	-	Անվճար	Անվճար	Անվճար
23	Ղեկի հիդրոուժեղարարի յուղի փոխարինում	-	0	0	0
24	Ղեկի հիդրոուժեղարարի յուղի ավելացում	-	0	0	0
25	Վերևի լծակի վռանների փոխարինում	-	0	0	0
26	Ներքևի լծակի վռանների փոխարինում	-	6,000	8,000	8,000
27	Լծակի փոխարինում	-	5,000	6,000	6,000
28	Կայունարարի վռանների փոխարինում	-	6,000	6,000	8,000
29	Կայունարարի կանգնակի փոխարինում	-	4,000	4,000	4,000
30	Անվաքացքի կարգավորում (ռազվալ)	-	6,000	14,000	14,000
31	Անվադողերի փոխարինում	-	7,000	7,000	7,000
32	Անվադողերի բալանսավորում	-	7,000	7,000	7,000
35	Ինժեկտորների լվացում	-	15,000	18,000	18,000
37	Հաղորդալարերի հիմնական ուղիների փոխարինում/նորոգում	-	150,000	150,000	150,000
38	Հաղորդալարերի ճյուղավորված հատվածների նորոգում	-	20,000	20,000	20,000
39	Համակարգչային ախտորոշում թերությունների վերացումով	-	5,000	5,000	5,000
40	Հեռահար լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար	Անվճար
41	Մոտակա լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար	Անվճար
42	Հակամառախուղային լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար	Անվճար
43	Արգելակի լամպի փոխարինում	-	Անվճար	Անվճար	Անվճար

44	Արգելակման սկավառակի հղկում (զույգը)	-	10,000	10,000	10,000
45	Շարժիչի փոկի փոխարինում	100,000	5,000	5,000	5,000
46	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	-	5,000	5,000	5,000
47	Շարժիչի փոկի ձգանի փոխարինում	-	5,000	8,000	8,000
48	Օդորակիչի լիցքավորում	-	20,000	20,000	20,000
49	Հողակապի դրսի կամ ներսի փոշեթիկնոցի փոխարինում	0	0	0	0
50	Փականագործական աշխատանքներ՝ 1 ժ	-	6,000	6,000	6,000
51	Լծակի հեղյուսի փոխարինում	-	Անվճար	Անվճար	Անվճար
52	Զսպակի վռանի փոխարինում	-	0	0	0
53	Մետաղաձողի վռանի փոխարինում	-	0	0	0
54	Շարժիչի բարձիկի փոխարինում	-	5,000	5,000	6,000
	ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ	Վազք կմ (պարբերաբար)	ԿԻԱ -ՌԻՈ Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	ԿԻԱ -ՕՊՏԻՄԱ Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	ԿԻԱ-ՍՊՈՐՏԵՋ Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Փոխանցման տուփի յուղ 1լ	70,000-80,000	7,500	8,500	8,500
2	Փոխանցման տուփի զտիչ	-	16,500	18000	18,000
3	Փոխանցման տուփի միջադիր	-	0	0	0
4	Շարժիչի յուղի զտիչ	-	3,500	3,500	3,500
5	Շարժիչի յուղ 1լ	7000	5,800	5,800	5,800
6	Շարժիչի հովացման հեղուկ 1լ	100,000	3,800	3,800	3,800
7	Ապակիների չսառչող հեղուկ 1լ	-	2,800	2,800	2,800
8	Հիդրավլիկի յուղ 1լ	100,000	-	0	0
9	Արգելակման հեղուկ 1լ	100,000	7,000	7,000	7,000
10	Հեռակա լամպ 2 հատ	-	7,000	7,000	0
11	Մոտակա լամպ 2 հատ	-	3,500	3500	0
12	Հակամառախուղային լամպ 2 հատ	-	13,000	13,000	13,000
13	Արգելակման կոճղակ դիմացի 1 կ/տ	20,000	45,000	50,000	45,000
14	Արգելակման կոճղակ հետևի 1կ/տ	60,000	32,000	33,000	34,000
15	Շարժիչի փոկ	80,000-90,000	18,000	24,000	28,000
16	Վառելիքի զտիչ	40,000	16,500	17,500	17,500
17	Օդի զտիչ	14,000	11,000	12,000	13,000
18	Օդորակիչի զտիչ	20,000	14,000	14,500	12,500
19	Վառոցքի մոմ 1հատ	35,000-70,000	4500-8500	8500-9500	8500-9500
20	Բաժանարար տուփի յուղ 1լ		0	0	7,500
21	Կամրջակի յուղ 1լ	50,000	-	0	6,000
22	Լծակի հեղյուս մանեկով ներքևի 1 կ/տ	-	18,000	20,000	25,000
23	Լծակի հեղյուս մանեկով վերևի 1 կ/տ	-	0	0	0
24	Լծակի վռաններ վերևի 1կ/տ	-	0	0	0
25	Լծակի վռաններ ներքևի 1կ/տ	-	11,000	12,000	12,000
26	Կայունարարի վռաններ առջևի 1կ/տ	-	4,000	4,500	4,500
27	Կայունարարի վռաններ հետևի 1կ/տ	-	0	3500	3,500
28	Կայունարարի կանգնակներ առջևի 1կ/տ	-	16,500	18,000	18,500
29	Կայունարարի կանգնակներ հետևի 1կ/տ	-	0	16000	18,000
30	Ինժեկտորի մաքրման հեղուկ	20,000	8,000	8,000	8,000
31	Ձեռքի արգելակման կոճղակ 1կ/տ	60,000	35,000	37,000	36,000
32	Արգելակման լապտերի լամպ 1 հատ	-	800	800	800
33	Շարժիչի փոկի հոլովակ 1 հատ	-	21000	21,000	25,000

34	Շարժիչի փոկի ձգան 1 հատ	-	45,000	45,000	60,000
35	Հողակապի փոշեթիկնոց դրսի 1կ/տ	-	18,000	19000	19,000
36	Հողակապի փոշեթիկնոց ներսի 1կ/տ	-	18,000	20000	20,000
37	Ապակեմաքրիչի ռետիններ 1կ/տ	-	10,000	11,000	110,000
38	Զսպակի վռան 1կ/տ	-	-	0	-
39	Մետաղածողի վռան 1կ/տ	-	-	-	-
40	Մետաղածող 1կ/տ	-	0	-	0
41	Շարժիչի բարձիկ վերևի	-	55,000	65000	65,000
42	Շարժիչի բարձիկ հետևի	-	45,000	45,000	50,000
43	Շարժիչի բարձիկ աջ	-	48,000	65,000	70000
44	Շարժիչի բարձիկ ձախ	-	65,000	65,000	70000

Ծառայություն՝

Ծառայության մատուցումը՝ իրականացնել 2020թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացրած հայտերի, սակայն ոչ ուշ քան 01.12.2020թ:

Փոխված դետալների ժամանակից շուտ խափանման համար պատասխանատվություն է կրում ծառայություն մատուցողը:

ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:

Մատուցվող ծառայությունների առավելագույն գումարներն են՝ 1- միավոր ԿԻԱ -ՌԻՈ -392000 (երեք հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, 1- միավոր ԿԻԱ -ՕՊՏԻՄԱ - 395 000 (երեք հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, 1- միավոր ԿԻԱ-ՍՊՈՐՏԵՋ -488 200 (չորս հարյուր ութսունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ավտոմեքենաների ծառայությունների պայմանագրի առավելագույն գինը կազմում է 1 275 200 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կապիտալ Մոթորս» ՍՊԸ տնօրեն

Գ. ՆՈՒՐԻՆՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՄԱԾՁԲ-20-4-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV-ի կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայություններ	71631260/1	318800	637600	637600	637600	956400	956400	956400	1275200	1275200	1275200

Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կապիտալ Մոթորս» ՍՊԸ տնօրեն

Գ. ՆՈՒՐԻՆՋԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՄԱԾՁԲ-20-4-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն